ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«13» 09 2023թ.
№ Պ/ԵՍ/Ա-1133

«Աննա Համբարձումյան» ԱՁ-ին
ՀՎՀՀ 78672943
ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 33/18
Հեռ.՝ +37494 402 816

ՀՀ պաշտպանության նախարարության և «Աննա Համբարձումյան» ԱՁ-ի միջև 10.02.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-8/2-5 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) և դրան կից՝ 04.04.2023թ. կնքված համաձայնագրի (այսուհետև՝ Համաձայնագիր) համաձայն՝ վերջինս պարտավոր էր 2-րդ եռամսյակում մատակարարել 1 000 հատ հատուկ Ա3 ծրար /Ծրար Ա-3 ձևաչափի անկյունային կափույրով/, որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **19.09.2023թ.-ին** միակողմանի մասնակի լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «Աննա Համբարձումյան» ԱՁ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել ***990 ՀՀ դրամ***՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), ***550 ՀՀ դրամ***՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետերի համաձայն), որը հաշվարկված է մինչև 22.08.2023թ. ներառյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի (Համաձայնագրի) միակողմանի լուծման արդյունքում որակավորման ապահովման գումարը կազմում է **8 250 *ՀՀ դրամ,*** որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ մինչև 2023թ. սեպտեմբերի 28-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **8 250 *ՀՀ դրամ*** որակավորման ապահովման գումարը, ապա «Աննա Համբարձումյան» ԱՁ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 2023թ. սեպտեմբերի 28-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ